

I. *ինչպէս* i-mage (պատկեր), i-dol (կուռք), i-dyll (հովուներդուծիւն), i-diot (ապուշ), i-mitate (նմանիլ):

H. *ինչպէս* h-yemen (խորոց), h-ammer (մուրճ):

O. *ինչպէս* o-men (գուշակուծիւն), o-mnis (ամէն), o-ther (ուրիշ):

Au. *ինչպէս* au-tre (ուրիշ), au-tour (շուրջ):

Y. *ինչպէս* y-wis (այո, անտարակոյս):

B. *ինչպէս* b-lare (բարձրաձայնել), b-lind (կոյր), b-lond (խարտեաշ), b-lame մեղադրել:

S. *ինչպէս* s-nare (հնարք), s-pray (սփռել), s-spirit (հոգի), s-py (լրտես), s-stone (քար), s-pond (ծախսել):

De. *ինչպէս* de-main (վաղը), Do. *ինչպէս* do-mani (վաղը):

To. *ինչպէս* to-day (այսօր), to-morrow (վաղը):

K. *ինչպէս* k-nife (դանակ), k-now (ճանչնալ), D. *ինչպէս* o-d-er (կամ):

G. *ինչպէս* g-leich (նման) եւն.:

2. — Ա. *ինչպէս* ա-թու, ա-շուն, ա-նուն, ա-մուլ, ա-մուլ:

Ե. *ինչպէս* ե-ղերք, ե-տեղ, ե-պերել:

Ի. *ինչպէս* ի-մանալ, ի-մաստուն:

Հ. *ինչպէս* հ-գոր, հ-ոռմ, հ-բաշք, հ-բէշ, հ-բիտակ:

Յի. *ինչպէս* յի-մար:

Կա. *ինչպէս* կա-մուրջ:

Սկե. *ինչպէս* սկե-սուր:

Ս. *ինչպէս* ս-տուր:

Յս. *ինչպէս* յս-տակ:

Յա. *ինչպէս* յա-տակ, յա-տուր:

Ձ. *ինչպէս* զ-մայլիլ, զ-մելի:

Շ. *ինչպէս* շ-նորհ:

Յ. *ինչպէս* ց-նորհ:

Մա. *ինչպէս* մա-մուռ:

Նա. *ինչպէս* նա-նիր, եւն.:

Մեր քննութիւնը կ'ամփոփենք հինգ մասերու տակ:

Ա. — Երկու բաղաձայններէ կազմուած չաստուածութիւններ կամ արմատներ ու անոնցմէ առաջ եկած բառեր:

Բ. — Պարզ երեւցող բառեր, որոնք իրականին մէջ՝ բարդ բառեր են, կապուած ըլլալով երկու տարրեր արմատներու կամ չաստուածութիւններու հետ:

Գ. — Բաղաձայնէ ու ձայնաւորէ կազմուած արմատներ ու անոնցմէ առաջ եկած բառեր:

Դ. — Ձայնաւորէ ու բաղաձայնէ կազմուած արմատներ ու անոնցմէ առաջ եկած բառեր:

Ե. — Մէկէ աւելի ձայնաւորէ կազմուած բառեր եւ մասնիկներ:

Այս հինգ մասերը տեսնելէ առաջ կու տանք ցանկը համառօտութիւններուն, որոնց ստեղծողները հանդիպելիք յառաջիկայ յօդուածաշարքին մէջ:

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՅԱՆԿ

Անգ.	= Անգլիերէն
Ա. Ս.	= Անկլո-Սախսներէն
Աս.	= Ասորերէն
Ար.	= Արաբերէն
Գ.	= Գերմաներէն
Դան.	= Դանիարբերէն
Թրք.	= Թրքերէն
Իսլ.	= Իսլանտերէն
Իտ.	= Իտալերէն
Իր.	= Իրլանտերէն
Լ.	= Լատիներէն
Հ.	= Հայերէն
Հ. Բ. Գ.	= Հին բարձր Գերմաներէն
Հոլ.	= Հոլանտերէն
Յ.	= Յունարբերէն
Շ.	= Շուեդերէն
Պր.	= Պարսկերէն
Սկնտ.	= Սկանտինաւերէն
Սկտ.	= Սանսկրիտ
Տեւտ.	= Տեւտոներէն
Քիւրտ.	= Քիւրտերէն
Ֆ.	= Ֆրանսերէն

Հ. ԱՐՐԱՀԱՄ ԱԴԱՄԵԱՆ

(Շար. 1)

ԵՓՐԱՏԻ ՍԱՀՄԱՆԱԳԼՈՒԻԸ ՊՈՍՊԷՈՍԻ ԺԱՄԱՆԱԿ(*)

Վերի խորագրին տակ «Հանդէս Ամսօրեայ»-ի մէջ մօտաւորապէս տարիէ մը ի վեր Հ. Յ. Տաշեանի կողմէ թարգմանաբար կը տրուի խիստ չահեկան եւ ուշադրաւ յօդուածաշարք մը:

Սիւրիոյ հին պատմութեամբ զբաղողներու համար հետաքրքրական նորութիւններ կը բովանդակեն այդ յօդուածները, ուր տեղադրական ցուցմունքներ, որոշ ու մեկին ծանօթութիւններ՝ տեղանուններու մասին, նոյնպէս հոռմէական ճամբաներու, բանակատեղերու առնչութեամբ՝ սպառիչ տեղեկութիւններ կը տրուին, նոր ու համոզիչ ձեւով մը, նամանաւանդ ծանօթութեանց բաժնին մէջ, ուր իր յատուկ աշխատանքը ունեցած է Հ. Տաշեան:

Այս բոլոր տեղեկութիւնները՝ իրենց մանրամասնութեանց մէջ քաղուած են Ստրաբոնէ սկսեալ մինչեւ 1912 թ. զանազան հին պատմագիրներու գործերէն, արդի հնագիտական ընկերութեանց հետախուզական պեղումներէն, եւ 1600 թուականէն առիւն՝ ճամբորդներու գիտական ուղեգրութիւններէն: Անոնք մանրակրկիտ աշխատութեամբ վերլուծուած, ամփոփուած եւ լոյս աշխարհ ընծայուած են յիշեալ ուսումնասիրութեան մէջ:

Ռազմադիտական բացառիկ կարեւորութիւն ընծայուած քանակատեղերու եւ անոնց տարրեր վեդրոններու հետ ունեցած հաղորդակցութեանց ճամբաներու եւ հետաւորութեանց հետ կապ ունեցող բոլոր խնդիրները ուսումնասիրուած եւ անոնց մասին տրուած են լիառատ տեղեկութիւններ, որ կը նշանակէ Սիւրիոյ տեղադրութիւնը իր լայն չափերուն մէջ:

Քաղաք ու աւաններու հին հոռմէական կամ յունական անուններուն քով՝ նշանակուած են ներկայիս գործածութեան մէջ եղած անունները: Իբր օրինակ յիշենք

քանի մը տեղանուններ. — Սերկիոպոլիս — Ռասաֆիլէ: Պամպիւսիս, Յերոպոլիս — արդի Մեմլիք: Զօլմա, Պիր — Պէրէճիք: Տօլիքուս — Տիւլիք: Արոմէ — Ղալէթ Մըտրդ: Նիքաքոպոլիս — Իսլահիէ: Պարմիր — Թաթմուր: Գերմանիկ — Մարաշ: Կիւրիս — Կորիսու, Հայ մատենագրութեան մէջ՝ Վարդան Այգեկցիի ծննդավայրը ի Սօրոգ վալէ: Եւ ասոնց նման հին ու նոր անուններ, որոնք ընթերցողին կու տան լայն ծանօթութիւն:

Յօդուածագրին իսկական նպատակն էր զած է՝ Եփրատ գետին արեւմտեան ափին վրայ հաստատուած հոռմէական գիւղերու լայն կայաններուն տեղերը որոշել, եւ ճամբաներու վրայ գետեղուած մղոնաքարերու միջոցով ուղղութիւնները մատնանշել: Այս առիթով զիւրաւ կրնանք պարսկական յարձակումներուն ու արշաւանքներուն հետեւիլ եւ հոռմէական գիւղերու թեան բռնած զիրքերը տեսնել ու հասկընալ:

Հոռմայեցիները Արեւելքի մէջ կեդրոն ունենալով Անտիոքը, իրենց զօրքերը շարժման մէջ կը դնէին երբ հարկը պահանջէր, թէ՛ Սիւրիոյ հարաւ եւ թէ՛ հիւսիսը՝ իրենց իսկ շինած ռազմական ճամբաներու վրայէն, գիւղերէն ալարսկական գրոհին դէմ: Սիւրիոյ հարաւը ըսելով՝ պէտք է հասկնանք Պարմիրը, իսկ հիւսիսը՝ Եփրատի ձեւերէ քաղաքները: Զօլմա — Պէրէճիք — Սամաթ:

Անտիոքէն Պարմիր երթալու համար ճամբան կ'անցնի Որոնդէս գետի հոսանքն ի վեր, մինչեւ Արոմէ — Ղալէթ Մըտրդ, որ հոռմէական լեզէններու, նամանա-

(*) Նկատի առնուած միմիայն «Հանդէս Ամս.»-ի 1959, 9-11 միացեալ թիւերը: Այստեղ կու տանք մեր ակնադատի պարզութիւնները:

անդ հեծելազորի կեդրոն նկատուած էր, իր արածելի ընդարձակ մարզադետրոններու շնորհիւ: Արտմէայէն ճամբան վերկարածուէր Հոմս, Հոմսի վրայով դէպի Պարմիր, իսկ Պարմիրէն շնչառակի հիւսիս՝ Սերկիսոպոլիս, այժմու Ռասաֆիյէ՝ Եփրատի վրայ:

Սերկիսոպոլիսը ռազմական տեսակէտով խիստ նշանակալից դերքի մը վրայ կը գտնուէր: Այս շրջանին՝ Եփրատը ամառուան եղանակին անցանելի վիճակի մէջ կը գտնուէր, իր ծաւալուն, ծանծաղ ու դանդաղ հոսանքով: Զենորիայի ամուսինը՝ Ողենաթոս, այս տեղէն իր յարձակումները կը պատրաստէր պարսիկներու եւ Կապադովկիոյ երկիրներու վրայ:

Ինչպէս կը տեսնուի՝ Սերկիսոպոլիսը բանակ կեդրոն մը պէտք էր ըլլար՝ հիւսիսէն հարաւ Սիւրիա հասնելու: Մեր Վահան Գողթնեցին այս ճամբան ընտրած էր Հայաստանէն Դամասկոս վերադառնալու ատեն, նոյնպէս շատ հաւանական է որ Սահակ Զորափորեցին ու Յովհաննէս Օձնեցի կաթողիկոսները այս ճամբով Դամասկոս դացած ըլլան:

Սիւրիական հողին հիւսիսային մասին վրայ, Եփրատի արեւմտեան ափին, հոռմայեցիները ունէին մէկէ աւելի զինուորական կեդրոններ, որոնք կապուած էին առանձնապէս շինուած ու պաշտպանուած ճամբաներով՝ Անտիոքի:

Հետեւելով այդ ճամբաներուն, մենք կը տեսնենք տեղ տեղ մնացորդները այդ սալայատակուած ուղիներուն, որոնք մինչեւ իսկ հիմա զինուորական արժէք կը ներկայացնեն: Անտիոքէն ուղիղ գիծով դէպի Հալէպ կ'երկարէր հին հռոմէական ճամբայ մը, որուն խոշոր քարերով շինուած մասերը դեռ կ'երեւին Պապէլհաւա ըսուած տեղը: Հալէպէն հիւսիս-արեւելք բանուկ ճամբայ մը կ'երկարէ Սիւրիոյ «ճայրագոյն հիւսիսակողմը»: «Այս երկրաբաժինը հնութեան ժամանակ շատ բազմամարդ էր, եւ մշտապէս բանուկ էր երթեւեկութեան, նաեւ պատերազմական սպասարկութեան համար»:

Հալէպէն մեկնող այս գիծը Յերասպոլիս – Միւսայիճ հանդիպելով կը վերջանար Կարկէմիշ – Ճարասպուլուս:

Միւսայիճ խոշոր բանակատեղի մըն էր: Հոռմայեցիներէն դարեր առաջ ան կեդրոն էր կրօնական պաշտամունքներու ու ծիսակատարութեանց, որոնք ամիսէ մը աւելի կը տեւէին, հարիւր հազարներով ժողովուրդներու ներկայութեան:

Յուստինոս կայսրը Միւսայիճը ամբողջ նոր պարիսպով մը. «մեծ հոր մը փորել տուաւ պատերազմի ատեն հարկաւոր ջուրը հողալու համար»: «Միւսայիճի ամէնէն նշանաւոր յատկանիշներէն էին ջրմուղները, որ կանգուն են մինչեւ հիմա»:

Կարկէմիշ – Ճարասպուլուս կապուած էր Թիւ Պէշարի (Հոռմ. մատենագրութեան մէջ Թիւն Աւետեաց): Թիւ Պէշար՝ Եփրատի վրայ դուռն էր Ուրֆայի. այս կէտէն ընդհանրապէս տեղի կ'ունենային Պաղտատի ու Մուսուլի վրայ յարձակումները: Թիւ Պէշարի վերջին խոտակեր ասպետն էր Ճօսիւ Բ. որուն կինը Ծնորհալին եղբորը աղջիկն էր: Գրիգոր Պահլաւունի կաթողիկոսը ու Ներսէս Ծնորհալին՝ «Ծովք»ը անապահով գտնելով կ'ուզէին աթոռը փոխադրել Հայաստան. այս մտածումով «Ծովք»էն կու գան Թիւ Պէշար եւ անկից Ուրֆա ու Հայաստան մեկնելու: Ճօսիւնին վինը կը համոզէ պահլաւունին եւ անոր կը յանձնէ Հոռմկլան, որ իրենց կը պատկանէր: Պահլաւունի կաթողիկոսը իր պարագաներով կը հաստատուի Հոռմկլայ ու այսպէսով Հոռմկլայ բերդը կը դառնայ Կաթողիկոսանիստ Աթոռ: Թիւ Պէշարէն քիչ վեր կը գտնուի Զօկմա, Պիւր կամ Պէրէճիք զինուորական կարեւոր կայանը, եւ անկից վեր՝ Հոռմկլան ու Սամսատը:

Սամսատ՝ Եփրատի արեւելեան ափին վրայ է. նոյնպէս կարեւոր հռոմէական կայան: Այսպէս ուրեմն Անտիոքէն Հալէպ, Միւսայիճ, Ճարասպուլուս, Թիւ Պէշար, Պէրէճիք, Հոռմկլայ եւ ճայրագոյն հիւսիսը՝ Սամսատ:

* * *

Մենք ունինք դեռ ուրիշ երկու հռոմէական ճամբաներ, որոնք կ'երկարին Անտիոքէն Եփրատի արեւելեան եզերքը: Ասոնցմէ առաջինը՝ Անտիոքէն դէպի Ճիւր Շուղը, ուր Ողենդէսի վրայ շինուած հռոմէական կամուրջն անցնելով կը դիմէ Ս. Սիմոնի վանքին արեւմուտքը, ճէնտէրիսի վրայով Աֆրին գետին արեւելեան եզերքը. հետեւելով գետին հոսանքն ի վեր հովիտ ու կիրճերու մէջէն կը հասնի Կիւրիս – մեր մատենագրութեան մէջ ծանօթ Կորիսու, Վարդան Այգեկցիի ծննդավայրը՝ այժմ Խօրոյ գալէ անունով ծանօթ: Այս ճամբուն վրայ կը գտնուին երկու վամուրջներ, բարձր կամարներով շինուած: Սիւրիական հողի վրայ շինուած հռոմէական կամուրջները բարձր կամարով են: Կուրիսէն ուղիղ դժով ճամբան կը շարունակէ Քիլիսի եւ Այնթապի հիւսիսէն Տիւրքի հողերուն վրայէն Զօկմա, Պէրէճիք, Եփրատ գետի արեւելեան ափը: Այս գծին վրայ մղոնաքարեր հաղուազիւտ եղած են:

Տիւրիւք – Juppiter Dolichanus հին ասորական ու արամական շրջաններուն՝ մեհաններու կեդրոն եղած էր. հոս կը գտնուէր Արամագղի հսկայ ոսկեծոյլ արձանը. որոշ պաշտամունքներով ու ծիսակատարութեամբ կը տօնուէին Տիւրիւքի հանդիսաւորութիւնները: Հոռմայեցիները Տօլքանէսի պաշտամունքը ու վարդապետութիւնը ընդարձակեցին ու փոխադրեցին Արեւմուտք, նամանաւանդ Ֆրանսա:

Անտիոքէն մեկնող կարեւոր ռազմական ճամբաներէն վերջինը՝ կ'երկարի ուղիղ դժով դէպի հիւսիս՝ Մարաշ: Այս ճամբան կ'անցնի քերելով Ամանոսեան լեռներու արեւելեան կողքը եւ հին հիթիթական կեդրոններու քովն ի վեր՝ մինչեւ Տաւրոսեան լեռներու ստորոտը՝ Մարաշ, ուսկից կըրկին դարձք մը կ'ունենայ արեւելք եւ կը հասնի Եփրատ:

Անտիոքէն ծագում առնող այս ճամբան Պաղրաս բերդի ստորոտէն կ'երկարի Գըրլոյ խան եւ անկից մուտք կը գործէ Ամանոսի ու Քիւրտ տաղի կիրճերուն մէջ,

եւ կը հասնի Նիկոպոլիս – Իսլահիէ դաշտային յուրթի ու հարուստ գետնի վրայ: Կիրճին բացուածքի շրջանակին մէջ կ'երեւին փլատակուած ամրութիւններ. այս արեւելեանէն մօտաւորապէս հինգ քիլոմէթր հեռաւորութեան վրայ՝ Թրափիստները ունին ընդարձակ այգեպտաններ ու պղտղատու ծառերով պարտէզներ. Շըխը կը կոչուի այս հողամասը, որ էքպէզ հայկական դիւղին մօտն է: Իսլահիէէն քիչ անդին կը տեսնուի Տարպալի հայկական ամրոցը, որ կը հսկէ ամանոսեան անցքի մը վրայ: Ճամբան կը շարունակէ ցածիկ բլուրներու վրայէն՝ դէպի Սամալա – Զէնճիրի հիթիթական յայտնի բերդաքաղաքը: Զէնճիրի մէջ հնախոյնները գտած են մեծ թիւով հիթիթական արձանագրութիւններ, արձաններ, ժայռերու վրայ ցրուած քանդակներ, որոնցմէ շատերը փոխադրուած են Պերլինի Ֆրեմերիք Թանգարանը, մասնաւոր յարկաբաժնի մը մէջ, որոնք տեսնելու բախտը ունեցայ Գերմանիա գտնուած ատենս:

Զէնճիրիէն կը շարունակուի ճամբան դէպի Մարաշ, եւ ահա Սարվանդիքար հայկական բերդաւանին ստորոտէն անցնելով կը հանդիպին հռոմէական կամուրջի մը, Ագսու գետին վրայ երեք կամարներով կառուած: Կամուրջէն անդին՝ Մարաշ վեց քիլոմէթր հեռաւորութեան վրայ կը գտնուի: Մարաշի հիւսիս-արեւմուտքէն, Տաւրոսեան լեռնաշղթաներու հովիտ ու կիրճերու առանցքէն, հռոմայեցիները նոր ճամբայ մը կը շինեն, Կոմանայէն – Շար Տէրէ սկսեալ. Կոկիսոն, Ճոնճիկ, Ֆրոնուզ, Կապան՝ դէպի Մարաշ: Մարաշի մօտ Զահան գետին վրայ հոռմայեցիները կը ձգեն կամուրջ մը լայնի ու բարձր կամարներով, որ մինչեւ հիմա ամրակուռ կը մնայ: Այս լեռնային ճամբան՝ ռազմական տեսակէտով խիստ արժէքաւոր հանդիսացաւ Բիւզանդացիներու եւ Իկոնիոյ Սելճուք սուլթաններու ժամանակ, ամէնէն կարճ ճամբան ըլլալով Եփրատացոց երկիրը հասնելու համար:

Մարաշէն՝ Եփրատի վրայ կառուցուած կայանները երթալու համար հոռոմայեցիները շինած են ճամբաներ, որոնց հետքերուն գրեթէ ամէն քայլափոխիդ կը հանդիպուի: Հոռոմայեցիները նախամեծար համարած են իրենց զինուորական ճամբաները շինել ցածրիկ բլուրներու վրայ, առ ի զդուշութիւն թշնամի յարձակումներու եւ կամ դիտարանի պաշտօն տալով անոնց: Մենք այդ ճամբաներուն կը հանդիպինք Մարաշէն արեւելք ութը քիլոմէր հեռավորութեան՝ Օտուն Սալա կոչուած տեղը, անտառախիտ բլրակներու վրայ, որ հարիւր յիսուն մեզը երկարութեամբ ու վեցէն հինգ մեզը լայնքով խոշոր քարերով սալաշատակուած հոռոմէական ամէնէն դեղեցիկ ու ամէնէն անաղարտ մնացած ճամբայ մըն է:

Այս ճամբան կ'երկարի դէպի «Ծովք»՝ Ներսէս Շնորհալիի ծննդավայրը, միշտ հետեւելով բլուրներու դաղաթներու վրայէն. եւ ապա փոքր վայրէջքով մը կը մօտենայ «Ծովք»ի լիճերուն: Ծիւտ այդ կէտին վրայ կայ կրկին բարձր կամարով շինուած կամուրջ մը եւ մօտը՝ քրտական դիւղ մը Բէրմուշ անունով, որ անկասկած հոռոմէական շինուածք մըն է, կամուրջը եւ դիւղը՝ հայկական անունով ծանօթ:

Իկոնիոյ Մեսուտ սուլթանը, 1149 թ., կոկիտունէն հոռոմէական ճամբաներէն անցնելով կ'արշաւէ Եփրատացեաց երկիրը դէպի Թիւ Պէշար (Թիւն Աւետեաց), կը գրաւէ Մարաշը եւ կը շարունակէ ճամբան: Ծովքի պահլաւունիները, կաթողիկոսն ու իր եղբայրը կ'իմանան այս աղէտը, որու մասին Շնորհալի կը գրէ...

Մասուտ սուլթանն Յիկոնացեաց
Եկեալ յաշխարհ դերմանացեաց
Առեալ զաւանս քաղաքայնոց
Մինչ ի կողմանս Եփրատացեաց
Իսկ հայրապետ հանուր հայոց.....

Փախուստի կը դիմէ ու կ'ապաստանի Թորոս իշխանի մօտ, Այլասեռքար դղեակին մէջ:

Մեք ի դղեկէն որ Ծով կոչի
Որ սեփական մեր էր տեղի...
Անցեալք ի յայնկոյս Տօրոսի.....

քանի որ հոռոմէական ճամբան Ծովքի մօտէն կ'անցնէր եւ ուրեմն իրենց համար վտանգաւոր պիտի ըլլար Մասուտի անցքի պահուն:

Ծովքի մօտ հոռոմէական ճամբան կ'երկարէր, մին դէպի հարաւ՝ Թիւ պաշար, Զօկմա, Պէրէճիք, իսկ միւսը՝ վը շարունակուի ուղիղ դժով Սամսատ կամ Սամսատ:

Սամսատ անցնող ճամբուն վրայ, Բեսունի մօտ Կէօքսու (Նէհր Աղրազ) գետակին վրայ շինուած է շատ մեծ, կամարակապ բարձր աշէրով կամուրջ մը՝ Ալթուն Բէօփրիւ: Պատմութենէ ծանօթ է որ այս կամուրջին մօտերը է. դարուն (Ք. Ա.) տեղի ունեցաւ Ուրարտացիներու եւ Ասորեստանցիներու միջեւ մեծ պատերազմը, ուր Ուրարտացիները յաղթուած քաղաքացան դէպի հիւսիս, Հայաստան:

* * *

Մենք շատ սեղմ կերպով մը ծանօթացուցինք Եփրատի արեւելեան ափին վրայ գտնուող հոռոմէական կայանները եւ տըւինք հակիրճ պատմականը այդ վայրերուն:

Իրականին մէջ Եփրատի վերի աւազանը ունի հայ պատմութեան մէջ մեծ ու կարեւոր դերք մը: Նոյնը կրնանք ըսել նաեւ Եփրատի Սիւրիական մասին համար՝ ուր Ուրարտական, Արշակունիական եւ Կիրիկեան շրջանին՝ հայերը ունեցած են պատմական դրուագներ, որոնք ըստ արժանւոյն չեն ներկայացուած մինչեւ հիմա:

Տոքթ. Յ. Տէր ՂԱԶԱՐԵԱՆ

ՍՈՒՐԱՏ Դ. ԱՆՑՔԸ ՍԵԲԱՍՏԻԱՅԷՆ ԵՒ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ

1635

Սուլթան Մուրատ Դ. 30 Մարտ 1635ին, զինուորական պատրաստութիւններն աւարտելէ ետք, 24 տարեկան հասակին, Իւսկիւտարէն ճամբայ ելաւ ասեղ բանակով մը Պարսկաստանի դէմ: Անցնելով Էսկիզէի, Գոնիա, Կեսարիա քաղաքներէն, բանակը Մայիս 22ին հասաւ Սեբաստիա, ուր մնաց 16 օր¹:

Բանակին յառաջխաղացումը մինչեւ Սեբաստիա տեղի ունեցած էր շատ դժուր դակ պայմաններու մէջ, հեղեղանման անձրեւներու, ձիւնի եւ բուռն փոթորիկներու պատճառաւ: Սեբաստիայէն առաջ, Ափարթը Էօզլիի հանգրուանը ամբողջովին ծածկուած էր ցեխով: Մինչեւ Սեբաստիա, բանակը 40-50 անգամ անցած էր կամուրջներէ եւ ճախճախուտներէ: Անթիւ ու անհամար բեռնատար անասուններ ցեխերուն մէջ խրելով մեռած էին: Այլախ կամուրջը անցնելու ատեն զինուորները եւ անասունները զերար հրմշտկելով գետը ինկած էին եւ խեղդուած: Սեբաստիա ժամանումէն ետք, ամբողջ 8 օր բուռն հովերն ու տեղատարափները անպակաս եղած էին: Օր մը կայծակներն ու որոտումները տեւած էին անընդհատ 4-5 ժամ: Հո-

ղը այնքան կակղացած էր որ կարելի չէր եղած վրան կանգնել: Գիշերներն ալ օդը չէր մեղմացած: 11րդ օրը բուռն հովին հետ կարկուտ տեղացած եւ աննկարագրելի որոտում մը ծագած էր²:

Սուլթանը ճամբուն վրայ ամէն տեղ ծայրայեղ խստութեամբ պատժած էր ամէն անոնք որ ժողովուրդը հարստահարած կամ նախապէս հարստահարած ըլլալէ ետք պետական պաշտօններու կոչուած էին: Անգթօրէն պլխատել եւ մորթաղեր ընել տուած էր թէ՛ փաշաներ եւ թէ՛ գաւառներ: Նիկոմիդիոյ եւ Նիկիոյ (Իզնիք) միջեւ Գաղղլը տեղափոխուի մէջ գլխատել տուած էր Կալաթալը չելեպի անուն վեթերան էնիչերի մը, որ իր հրամանին հակառակ, Պոլիս ձգած էր անկար էնիչերի մը, Սիսի Կաղիի մէջ՝ Գարաբըրանօղլու նախկին ապրտամբ մը եւ անոր զաւակները, Պարտաղլի մէջ՝ Մանիսայի սանձաղ պէյի Թուրիւնի Հասան փաշան, որ Գարամանիայի նախկին պէյերպէյին էր, Իսհաղլի մէջ՝ Գարա-աղաճի գաւառ Արապօղլու Մուստաֆան եւ անոր բանտակիցները՝ Գոնիայի մէջ՝ ուր ձիւրուն ոտնակոխ ընել տուած էր անոնց զիակները, Պէյլէհիերի

1. Յովհաննէս Սեբաստացի եւ Սահակ Երէց (Աւետարան, Երուսաղէմ, թ. 3349) ճիշտ նշանակած են ժամանման օրը, բայց Սեբաստիա կայքը հաշուած են 17 օր, յայտնօրէն մեկնումի օրն ալ միասին հաշուելով:

2. Սուլթանին պաշտօնատարներէն մէկը, որ բանակին ընկերացած է, օրը օրին արձանագրած է:

է բանակին հանգրուանները եւ արշաւանքի ընթացքին պատճառ կարեւոր դէպքերը: Օրագրութիւնը հրատարակած է Տոքթ. Ա. Սիւհեյլ Իւսկիւր «Տէօրուիւնիւ սուլթան Մուրատը Բեյի Սեֆերի քրոնիկոսի» վերնագրով (Պեկին-Էն, 1954, էջ 547-576): Այս տեղեկութիւնները եւս յիշ օրագրութենէն:

